ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 հոկտեմբերի 2022 թվականի N 1601-Ն

ԱՂԵՏԻ ԳՈՏՈՒ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԵՐԿՐԱՇԱՐԺԻՑ ՀԵՏՈ ՏԵՂԱԴՐՎԱԾ ԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՈՉ ՀԻՄՆԱԿԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ Մ Ա Ս Ի Ն

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 60-րդ հոդվածի 1-ին մասը, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 203-րդ հոդվածի 2-րդ, 4-րդ, 7-րդ և 8-րդ մասերը, «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հաստատել աղետի գոտու բնակավայրերի պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը երկրաշարժից հետո տեղադրված կամ կառուցված ոչ հիմնական շինություններից ազատելու կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ՝

1) սույն որոշման 1-ին կետով հաստատված կարգի դրույթները տարածվում են 1988 թվականի դեկտեմբերի 7-ի Սպիտակի երկրաշարժից հետո աղետի գոտու

բնակավայրերի պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերում տեղադրված կամ կառուցված բոլոր ոչ հիմնական շինությունների և որպես ոչ հիմնական շինություն համարակալված հիմնական շինությունների վրա (բացառությամբ օրինական ընթացակարգերով տրամադրված թույլտվության հիման վրա տեղադրված ոչ հիմնական շինությունների)՝ անկախ դրանց օգտագործման նշանակությունից (բնակության, առևտրի, կենցաղային և այլ նպատակներով) և պատկանելությունից.

2) սույն որոշման 1-ին կետով հաստատված կարգով նախատեսված գործընթացի իրականացման համար ելակետային են հանդիսանում Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի մարտի 29-ի N 361-Ն որոշման և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի դեկտեմբերի 20-ի N 1658-Ա որոշմամբ ստեղծված աշխատանքային խմբի գործունեության շրջանակներում փաստագրված ոչ հիմնական շինությունների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի կողմից 2021 թվականին իրականացված օդալուսանկարահանման տվյալների հետ համադրված քարտեզագրական նյութերը և աղյուսակային նյութերը, որոնք ենթակա են ճշտման ոչ հիմնական շինությունների և դրանցում բնակվող ընտանիքներին վերաբերող փաստաթղթային փաթեթները համայնքների կողմից ուսումնասիրության արդյունքում.

3) աղետի գոտու բնակավայրերի պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը երկրաշարժից հետո տեղադրված կամ կառուցված ոչ հիմնական շինություններից ազատելու գործընթացի ժամանակ բնակության նպատակով օգտագործվող ոչ հիմնական շինություններում բնակվող ընտանիքների բնակարանային պայմանների բարելավման մասով ցուցաբերվում է պետական աջակցության տարբերակված մոտեցում՝ կախված տվյալ ընտանիքի՝ ոչ հիմնական շինությունում բնակվողի կարգավիճակում հայտնվելու հիմքերից.

4) սույն որոշմամբ նախատեսված գործընթացի համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները Հայաստանի Հանրապետության տարեկան պետական բյուջեներում նախատեսվում են համապատասխան մարզպետարանների կողմից Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտե ներկայացված հայտերի հիման վրա.

5) սույն որոշմամբ նախատեսված գործընթացը մեկնարկում է սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից և ավարտվում է ոչ ուշ, քան 2027 թվականի նոյեմբերի 1-ը.

6) սույն որոշման համաձայն առաջարկվող աջակցություն ստանալու հնարավորությունից հրաժարված կամ աջակցություն ստանալու հնարավորություն ստացած, սակայն այդ հնարավորությունը սույն որոշմամբ նախատեսված կարգով և ժամկետներում չիրացրած ընտանիքների մասով սույն որոշմամբ նախատեսված աջակցության տրամադրման պարտավորությունը համարվում է դադարեցված, իսկ այդ ընտանիքների կողմից զբաղեցված ոչ հիմնական շինությունները ենթակա են քանդման սույն որոշմամբ հաստատված կարգի 8-րդ կետի համաձայն, աջակցությունից հրաժարվելու կամ աջակցություն ստանալու հնարավորությունն իրացված չլինելու փաստը հայտնի դառնալուց հետո մեկամսյա ժամկետում:

3. Առաջարկել Հայաստանի Հանրապետության Շիրակի, Լոռու և Արագածոտնի մարզերի համայնքների ղեկավարներին՝ սույն որոշման 1-ին կետով հաստատված կարգով՝ դրանով ամրագրված մոտեցումների և առաջնահերթությունների համաձայն, ապահովել համայնքների բնակավայրերի տարածքների պետական և համայնքային սեփականություն հանդիսացող տարածքները ոչ հիմնական շինություններից ազատելու գործընթացը:

4. Հայաստանի Հանրապետության Շիրակի, Լոռու և Արագածոտնի մարզպետներին՝ համակարգել սույն որոշման 3-րդ կետով սահմանված գործընթացը և կիսամյակային պարբերականությամբ Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտե ներկայացնել տեղեկատվություն՝ քանդված (ապամոնտաժված) ոչ հիմնական շինությունների և քանդված (ապամոնտաժված) ոչ հիմնական շինություններից վերաբնակեցված ընտանիքների վերաբերյալ:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Երևան

13.10.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ